



ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՑ ԳԻՏԻՆ

Ե Ի

ՋԱՅՆԱԿԱՆ ՓՈՒԱԿՐՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՑ

Ա ՀԱՌԱՍԻԿ այն կարեւոր և կենսոր
խնդիրը, Գերապայծառ Տէր և Հօրք վերապա-
տուեալք, որ անցնելով յեղափոխիս դարուց և դարա-
ւոր սերնդոց բովերէն, այսօր իբրեւ բազմակերպեան ողի մի
կը ցնցէ սաստկապէս ոմանց զգայնութեան ջղերն, և ոմանց ալ
նորանոր շահատակութեան ասպարէզ կը բանայ. որ կու տայ մեզ ընել
այս հարցումս, և ձեզ ներողամտութիւն լսելու: Տաազարձութիւն, տառ-
հանդիպութիւն, փոխադրութիւն տառից՝ անյատուկ անուանք, որոնք այսօր իբրեւ հաս-

ՆՈՅՆՄԵՐ - ԹԻԻ ԺԱ. 1907

31

կանայի և արուեստական դարձած բառեր, այնքան չափազանց դարձած են հայ գրագիտաց համար, անտարակոյս եւրոպացի որ և է բանասիրի մը գլխովին անհատականայի և անսովոր պիտի լինէին, եթէ պատահմամբ այս պատկառելի ակմբիս մէջ գտնուէր Այո, ինձ ծանօթ են երկոտասան նէն աւելի բանասիրական ծանրակշիռ հեղինակութիւններ, սակայն ասանցմէ և ոչ իսկ միոյն քով հանդիպած եմ երբեք ուսումն կամ վարդապետութիւն տառադարձութեան (transcription), այլ ընդհակառակն՝ ձեւման կամ ձայնից (théories des sons, Lantlière)։ Թող չկարծուի բնաւ, և չընծալուի իբրեւ միակ պատճառ՝ եւրոպացի բանասիրաց այդպէս վարուելուն՝ լատինական ուղղութենէ, որ հասարակ է ասանցմէ։ Այս ծագող աւելի նիւթ է, քան ուսումնական փաստ. վասն զի յիշեալ բանասիրաց ուսումնասիրութեանց նիւթերը միայն եւրոպական նոր լեզուները չէ որ կը կազմեն, այլ և արեւելեան հին լեզուներն. և ինչպէս մեզ՝ յունարէնի կամ մի ուրիշ նոր լեզուի, սյապէս նոքա ալ սանսկրիտէն սկսեալ հին պարսկերէն, ասորերէն և այլն, այլորեմէնքը կը փոխադրեն։ Այլորեմէնք, նուիրագործուած բառք և տառք, որք հասարակ են ամէն լեզուաց, և որ մի միայն ծագումն ունին, Ուրեմն ուրիշ վեհագոյն պատճառներ, ուրիշ ընդարձակածաւալ նիւթ մի, ուրիշ բնական և անհրաժեշտ հարկ մի կը ստիպէր զանոնք լեզուահնչիւններով կամ բառաձայներով, և ոչ թէ լոկ մեքենական տառերով պարապելուն։ Այո, բառահնչիւններ և ձայներ են, որք երբեմն հնարեցին և կազմեցին ազգաց և ժողովրդոց իրարմէ տարբերուող այնքան գաւառաբարբառներ և լեզուները, և պիտի չարունակեն անզգալար՝ կազմուածները զարգացնել կամ յեղափոխել։

Այս նիւթիս վրայ ընդարձակաբար խօսելու միտք չունէի ես, եթէ նախորդ ճառախօսք՝ բոլորովին բարձի թողի ըլած չլալ զայն, և տառահնչիւնութիւն՝ իբրեւ ձեւեմական և անստորինի գործողութիւն մընայէր մի նախնեաց՝ առանց բացառութեան, միշտ և ամէն պարագայից մէջ։ Այս կարծիքս Մ. Գարագաշեան արդէն տարիներ յառաջ պաշտպանեց «Արեւելք»-ի մէջ.

բայց զարմանալին այն է, որ լոկ նախնեաց տառադարձութիւնը մերժելու և տահկահայոց արտասանութիւնը պաշտպանելու նպատակաւ, Քայն, խօսելէս յառաջ, հարկ կը համարիմ ժողովոյս ուշադրութիւնը դարձնել մեր ճառախօսին անցեալ անգամ մեզ ներկայացուցած այն բազմախոռն կարծիքն, ընէմ ոմանց վրայ, որոնք թէպէտեւ կրնան համարուիլ այն ճառին իբրեւ պծնադարող և հմտական սկունքներ, բայց ոչ նոյնպէս գիտութեան նպաստող ճշմարտութիւններ և հիմնաւոր փաստեր. քանի որ համեմատական լեզուաբանութեան յեն համաձայնիւ, և անոր փորձաքարին մերձեցնելով կը լուծանին և կը փշիին զգաղադարս. վասն զի կամ հնդեւրոպական լեզուաց և բանասիրութեան մէջ ընդունուած ընդհանուր օրինաց հակառակ ենթադրութիւններ են, և կամ անոնց մէջ եղած բացատրութեանց և հայկական դպրութեան անձինք չըլանին մէջ յայտուած անծանօթ և ինքնակոչ հիւրեր։

Բառեցաւ, թէ Ե. դարուն մեր նուրբ, միջակ և թաւ բաղաձայներն յունարէններու վրայ և անոնց հուսաստաբար կազմուեցան։ Այս հասկնալի է. բայց այն՝ թէ այդ դասաւորութիւնն «արդի Տարօնական հնման համաձայն է, և թէ այսօր թէ յունական և թէ լատին բարբառոց տառերը կորուսած ըլալով՝ հանդերձ իրենց նախկին ձայները՝ նոր արտասանութեանց ձեռքով՝ հայկական տառերը միայն պահած են ճշդիւ զանոնք», այս հիտեւութիւնս շատ անհիմն է, գէթ մէջ բերուած օրինակներով, եթէ չհամարինք որ կամ այդ լեզուն իրո՞ւմ էր՝ առանձնայնորհութիւններով, և կամ մասնաւոր հրեշտակ մը Ս. Մեսրոպայ՝ կը կառավարէր անոնց հնչիւնները բնական օրինաց խուռնընթաց հոսանքին մէջ։ Ինչո՞վ ապացուցած է, թէ հայ նշանագրերը Ե. դարու տարօնեան, և ոչ թէ սյրարատեան հնման համաձայն տարբացան, և թէ այժմեան տարօնական արտասանութիւնը այնպէս պահուած է, ինչպէս որ էր Ե. դարուն։ Ո՞ր պատմաբանը կամ որ բանասէր կրնայ մտքէն անցնել՝ թող թէ համոզուիլ, որ մեզմէ շատ ամփոփ, օտարաց ազդեցութեանէն ազատ ապրող և բիւրագգի գրաւոր վաստակովք անընդհատ ծաղկող յայն ազգն և լեզուն այնքան փոփո-

1. Այն ուսումնասիրութիւնը պատասխանն է ուրիշ հեմական հատի մը. անցեալ ամիս ներկայացուցած ըլալով յօդուած մը Գրոց գիտելի վրայ (Բաղմալեկ, Սպար, Հոկտ). այժմ կը ներկայացնենք՝ նոյն նիւթին վրայ՝

մեր խոստման համեմատ ներկայ ճառախօսութեանը, որ կը շօշափէ ինչորոյն գործնական մտքը իր զանազան տեսակներով, — ժայնական փոխադրութիւնները հայե. բէնի մէջ։

խութեանց ենթարկուին, և Հայն և Հայկական տառադիւնները մնացած ըլլան անփոփոխ: Դիթէ նոյն իսկ մեր Հնագոյն արձանագրութեանց և դպրութեան մէջ տեսնուած բազմաթիւ աղաւաղութիւնքը ստոր հակառակը չեն ապացոյցաներ: Դարձեալ, եթէ անփոփոխ պահուած են Հայ տառից Հնչմունք, ուրեմն ինչ կը նշանակէ այն մեծ պայթարն արեւելեան և արեւմտեան Հայ արտասանութեանց մէջ: Ինչ պատճառաւ ստիպուած է ինքն իսկ դառնալ և յիշյեղել իր նախորդներէն այնչափ անզամ խօսուած և գրուած բաները: Մնացածը ձեզ կը թողու՛մ խորհել և դատել:

Կ'ըսուի, յունական β, γ, φ, և χ տառից համար, թէ Ե. դարուն փոխուած էին արդէն և կը Հնչուէին ըստ այժմուս վ, զ, ֆ, ք: — Պատճառը: — Արովհետեւ մեր նախնիքը յու. Βόσπορος Վասպորոս, ὄχι τῆς, πρόσχωμεν պատիտունէ թարգմանած են: — Նախ և առաջ դիտել իր տանք, որ ստոր և վեր ըսածին մէջ խոշոր հակասութիւն մը կայ. վասն զի մի և նոյն դարու յունական տառերն և Հնչմունքն այնտեղ իրրեւ հաստատուն՝ Հայ տառից և Հնչմանց իրրեւ նախատիպ և հիմն կը ծառայեն, իսկ հոս՝ ընդհակառակն՝ իրրեւ այլափոխուած՝ տարբեր տառահանդիպութիւններ յառաջ կը բերեն: Բ. Եթէ յիշեալ տառերը Ե. դարուն տարբեր Հնչունքն որ առած էին, ուրեմն ինչ բանք, երբ Մ. Խորենացի յնթադրուր բարբարոս, Φ. Փուռց. φυλάσσει փիւղակէս, Ելից χαλβάνη Φαղրան, գրեն, և այլք Հագար և մի տեղ: Ի՞նչ ըսենք դարձեալ, երբ կը տեսնենք որ Զ. դարուն վերջերը կատարուած Սգաթանեզգուսի յունարէն թարգմանութեան Հեղինակն Հայ. Բներ՝ դարձեալ չիղայի կը վերածէ. և վ՛ր. Ե. Օծի: Կ'երեւի թէ՛ այդ կորսուած Հնչումներն վերստի՞ն գտնուեցան, և մեռեալ տառերն ալ կենդանացած ըլլան: Գ. Եթէ տառերը այդ տառերն Ե. դարուն իրենց նախկին Հնչումները փոխած էին, և այն պատճառաւ իսկ նախնիք մեր β, γ, φ, և χ խէշի փոխադրեցին, ուրեմն կը Հնչուէին, թէ նախնիք իսկ փոխանակ մեքենական տառահանդիպութեան կապուելու, ձայնին աւելի ուշ ունէին: Դ. Վերոյիշեալ բառերէն երկուքին ծագումը զեռ լաւ որոշուած չէ, և ոմանք լատիներէնէ փոխ առնուած կը համարին, իսկ պոստիւսմէն յատուոյն: Ի՞նչ բանք՝ երբ կը տեսնենք Ե. դէն երեք դար յառաջ Պարթե թագաւորաց հազկենականներուն վրայ փոխանակ օծի՝ β, օր. Իմն, Βελὰς և ոչ Ὀυαλαρς և Յոյնք և Լատինք այնպէս կը պահեն. երբ նաեւ մեր նախնիք՝ զանդ. Baeyare + as-

pa = պէն. Bēvarāspը դարձեալ Բեհրասպ կը գրեն, այսպէս և պէն. Burtār = Բուրդար, և Հպ. Brzifarnāh = Բարգաւիրան: Դուք դատեցէք:

Չայնաւոր կրկնատառեր կամ երկբարբառներ՝ նախնեաց քով ըստ ձայնից և ոչ ըստ նիւթական տառահանդիպութեան թարգմանուելուն իրրեւ պատճառներ կ'ընծայէր մեր ձառախօսը՝ նախ ճնադրին (Հայ յիշէն թարգմանութեան արդեօք ըսել կ'ուզէ, չէ յայտ) վանկերը չբազմացնել, և աւ, ւ, կարճեր, աւ, ւ, օ՛ւ երկայն երկբարբառներուն հետ չչփոթելու համար. ք. «որովհետեւ յոյնք իսկ երկբարբառոց տեղ մերթ լոկ ձայնաւոր մի կը գործածէին. գ. ըստ որում ձայնաւորք կամ երկբարբառք՝ ամէն ազգաց մէջ փոփոխական են» և այլն և այլն:

Այս պատճառներէն առաջնոյն համար կրընանք ըսել իտալական առածով. Se non è vero, è ben trovato: Սակայն համեմատական լեզուաբանութիւնն, ընդհակառակն, այդ կրկնատառերուն կրճատման, փոփոխութեան և իրարանցման՝ մեր թարգմանիչներէն բոլորովին անկախ՝ արդէն դարեր յառաջ և բոլոր արիական և Հնդեւրոպական լեզուաց մէջ կատարուած եղելութեանն՝ ուրիշ ձայնական և քերականական հաստատուն օրէնքներ ցոյց կու տայ մեզ, քան թէ բացառիկ քմահաճայքներ. Հետեւաբար թէ՛ մեր թարգմանիչք և թէ՛ անոնց բնաորոց Հեղինակներն այդ ընդհանուր օրէնքն յարգելու համար՝ քան թէ վանկերը չբազմացնելու դիտմամբ այնպէս վարուեցան: Ով կը տարակուսի ըսածիս ճշմարտութեան, թոյլ կարդայ Բրազման¹, Բենֆէյ, Հիւալման, Սիւլլէր, և զայս առհասարակ. եւ աւելորդ կը համարիմ օրինակներ եւս խճողի սատ: Իսկ երկրորդ և երրորդ պատճառներն, այսպէս նաեւ թարգմանութեանց համար ըսած ներս են բուն խոստովանութիւնք՝ Հանդգալ Հարիւրաւոր շոշափելի և անժխտելի իրողութեանց, զորս տեսած է, բայց ոչ ճանչցած իրենց թույլ պատճառներով: Նիւթական տառահանդիպութեան ջատագով ձառախօսն՝ ձայնաւոր երկբարբառներ կամ բարբառներն՝ իրրեւ միմիայն ձայն թարգմանելն ընդունելէն վերջ, ինքնիրեն կը հակառէ, երբ նոյնը կը բացատէ քաղաքային երկբարբառներուն կամ կրկնատառերուն համար, որոնք սակայն՝ մի և նոյն ձայնական օրինաց համեմատ՝ յաճախ

1. Grundriss, ևս.

մէկ ձայնով թարգմանուած են ամէն Հին լեզուաց մէջ, բառեր իրարմէ փոխ առած ժամանակ։ Օրին. աղագաւ, առնունք Հին պարսկ. յատուկ անունն Baxtris, զոր զենդը Bāxdi փոխադրած է. իսկ յոյն Βάχτρα. և պահլ. ասննցմէ միայն առնելով՝ կը փոխադրէ Bāxr, ըստ Բունդիշէշի նոր պարս. և արաբ. Balx. իսկ Հայն փոխադրած է վերջինս Բաղխ և Բանդի։ Ուրեմն այս և զեռ ուրիշ անբաւ Որինակաց հանդէպ, — զորս յետոյ մէջ պիտի բերենք, — մեզ ալ ուրիշ բան չի մնար՝ բայց եթէ ըսել, որ բանասիրութիւնն առաց և եղեւ չի ճանչնար, այլ իրական փաստեր կը պահպանէ. և ո՛ր են այդ փաստերն. ո՛չ ապագէն այդ եղանակ խնդիր մ'ուսումնասիրելն կը նշանակէ ճշմարտութիւնէն փախլի կամ թողարկել զայն. սակայն դուք, որ անայտնո լսելու և ստղծող որոշելու միայն բազմած էք տատ, բաղդատեցէք, իսկ ես մի ուրիշ կէտի վրայ կը թեւածեմ, որուն եթէ ոչ ամբողջ ճառն, այլ բարբառը կը Հնչէ սակաւահին յունկն իմ, և քիչ առաջ՝ ըսածիս հետ սերտ տունջութիւն ունի։

Հատախօսը՝ բաղդաւայն կրկնատառերով և դած անուանց համար իսկ, օրին. աղագաւ, Schiller, գղ. Schiller, անցղ. Schiller, իտ. Schiller, և այլն, ձայնական թարգմանութեան աւելի, պնդեց, թէ «հարկաւոր է բացարձակ և նիւթական տառահանդիպութիւն» և ահաւաստի անոր զօրաւոր փաստը. «Ամէն ազգաց» ամէն անուանց բնիկ ձայնը թարգմանելու համար՝ հարկ է գիտնալ այդ անուանց բնիկ ծագումներն և ազգաց լեզուները. իսկ արդ՝ այս անկարելի է, ուրեմն անկարելի է և ձայնահանդիպութիւնն։ Բ. Դամանակը կը փոխէ միշտ լեզուաց և անուանց Հնչմունքը, բայց ոչ տառերը. ուրեմն այս վերջնոյս, այսինքն է՝ տառահանդիպութեան միջոցով միայն կարելի է պահել զանոնք զարուց ի դարս խառնափոխութիւնէ»։

Այս փաստերս, որք հեղինակին հետ՝ ուրիշներուն եւս թերեւս բանաւոր և զօրաւոր երեւցան, արդէն իսկ ոչնչացած կը համարուի՝ քիչ յոռաջ մէջ բերուած Բաղխ կամ Բանդի և զեռ ամբաւ ուրիշ անուանց օրինակով, զորս այնքան դարեւր վերջ իսկ համեմատական լեզուաբանութեան ձեռքով կը ճանչնանք, թէ անտարակոյս և իսկապէս մի և նոյն են, թէեւ այլ և այլ ազգաց և ժամանակաց բովերէն անցած և այլ և այլ ձեւեր առած ըլլան։ Մատուանդ թէ այս իսկ եեծ առաւելութիւն մ'է, որ կը ճանչնանք զանոնք ոչ ստակապէս, այլ նոյն իսկ զարուց և լեզուաց բնախօսական և ձայնական զարգա-

ցումներով, որոնք այսօր կազմած են և պիտի կազմեն համեմատական լեզուագիտութիւնը։ Բ. Դիտել կու տանք, որ Schiller անուան չորս ձեւերն իսկ վերոյիշեալ չորս լեզուաց մէջ մի միայն ձայն կամ շ, Հնչումն ունին, մասնաւոր թէ այդ sch = շ. Հնչման սիրոյն համար բնագիրը փոփոխած են և թէ նոյնը պիտի ջնսնան արտաբերել արդի կամ սպագային մէջ կազմուելիք լեզուները, իրենց մերձաձայն տառերու կու տակութեամբ։ Իսկ եթէ ուզենք, ինչպէս կ'ուզէ տառահանդիպեցնողն, բոլոր այդ տարբեր ձեւերն գերադնելնին վերածել, և զայն փոխանակ Դիլլերի՝ Սքիլլեր գրել, և ամբողջ մանակ բոլոր ազգաց նոյնահնչիւն ձայնները՝ գերմաներէնէ հետ՝ փոխած պիտի ըլլանք. ուրով յիշեալ լեզուները չճանչցողներն՝ Սքիլլերն եւս տառել չպիտի հասկնան՝ թէ ուստի՝ տառը եկած է. որովհետեւ նոքա ի սփիւռս ազգաց, յարեւելս և յարեւմուտս Դիլլեր ձայնը միայն լսած են։ Իսկ այնուհետեւ. — այնուհետեւ մնայք բարեւա լեզուական առանձնայատկութիւններ, մնայք բարեւ և ձայնական Հնչիւններ։ Այնուհետեւ կենդանի ձայնն ուրիշ բան չէ՝ բայց եթէ անյատուկ և մեծեալ տառ. իսկ տառը՝ ձայնները մեռցնող և խափանող գործիք։ Այս՝ ոչ այլ ինչ է, բայց եթէ դաշնակէս պահանջել ջուրիկի ձայն, և սակեց ալ ընդհակառակը։ Սեցէք բանասէրք և ձայնախօսք, լսեցէք շունչ և հագագ. լսեցէք և դուք, ով բարեխիտասկ մեր թարգմանիչք։ Այս, կը լսեն, կը խնդան, կը զարմանան և կը բողբոջեն իբրեւ ընդդէմ ծայրայեղութեան։

Սակայն վերոյիշեալ երկու նախադասութիւններն ինչպէս միացնենք հետեւեալին հետ, այսինքն թէ՛ «Կարձեալ այն անուանքը, որոց բնագրական ձեւն այլ էր և յունականն այլ, բնագրական ձեւը թարգմանեցին նախնիք, այսինքն է Արտաքերճիչը Արտաշէս, Տիլլաւոր Դմաւոն, Խոթանանից յարգանաց համար»։ Արդ՝ եթէ ճառախօսն յարգող է նախնեաց, և նախնիք մեր՝ անուանց բնագրական ձեւերը միայն ըստ ձայնին թարգմանեցին, — զանոնք յարգելու համար, — և ոչ եթէ տառահանդիպութեամբ, ուրեմն ինքն ինչ իրաւամբ Schillerը Սքիլլերի կ'ուզէ որ փոխադրուի և բնագրին ձայնը ոտքի տակ առնուի, Այս իսկ անտարակոյս հակասութիւն է, և իրարու հակասող փաստեր կարող չեն երբեք տառահանդիպութեան հաստատելիմը դրութիւն մը կազմելու. բայց հակասութիւն գործելէն աւելի, նախադասութեանց իրարու հակասակ ըլլալը չտեսնեն աւելի կը զարմացնէ զմեզ։ Հուսկ ի

վերջոյ կը ծանուցանեմ և զայս, թէ այս գիտողութիւններս ոչ անձնական պայքար մղելու և ոչ իսկ ուրիշին պայքարելու նիւթ տալու համար ըրինք, այլ առաջարկուած խնդրոյն հորիզոնը պայծառացնելու միակ նպատակաւ, զոր նախորդ ճառախօսն յարմար և անյարմար յառաջդրութիւններովն՝ իրրեւ թուի ամպերով մթադնեց: Դս անպայման կիրպով պաշտպան չեմ նիւթական տառուկեղպութեան, բայց և ոչ իսկսկզբունքով մերժող նախնեաց վարդապետութեան, ըլլայ հին, ըլլայ նոր լեզուաց մէջ: Չեմ կրնար բնաւ համակերպիլ՝ որ կենդանի ձայներն որ և է այլազօր տառերով փոխադրուին ի գիր և ի բան. բայց ի նմին ժամու լաւ ըմբռնած եմ, թէ տառերն ալ լոկ անձայն գործիքներ չեն՝ մեքենական դաստիարակութեամբ խօսքը մարմնացնելու համար: Եւ թէ ոչ՝ կաղմոսեան այրութենն՝ Եգիպտացւոց գաղափարանշաններէն տարբեր պատճառ մի կամ փառայութիւններ չպիտի ընձեռէին լեզուաբանութեան և Հնուկութեամբ՝ ես այս համոզումն ունիմ, թէ որ և է գրուոր բարբառի կամ դպրութեան մը մէջ ձայներն պէտք է որ անբաժան ըլլան տառերէն, և տառերն ալ ձայներէն. և թէ տառահանգիպութեան կանոնէն աւելի՝ ձայնական օրէնքը պէտք է գերակշիռ զնեւ կենդանի լեզուաց մէջ, ճիշդ պէն չպիտի, ինչ չպիտի որ նախկին վարուեցան իրենց դրակից և ժամանակակից ազգաց լեզուներու և գրականութեանց մէջ: Ահաբայտիկ այն բարդ գաղափարը, զոր պիտի բարգաւաճենք ի հետեւեալն:

* *

Խօսքն՝ է բան, և բանն ինքնին է խօսք, բռնած էր ի վաղ ժամանակաց և յեղյեղուած բեր անգամ. վասն զի յօդաւոր արարաւոր կամ արտաքին ձայնն ուրիշ բան չէ՝ բայց եթէ ներքին բանին և հոգեկան զաղափարներն արտայայտելու մարդոյս միայն սեփական միջոց: Այսպէս ալ, հետեւաբար, տառն ոչ այլ ինչ է, իւր կողման համաձայն, բայց եթէ յօդաւոր բարբառոյն կամ լաւ եւս մարդկային ձայնից և հնչմանց երկրորդ մարմնացումն կամ տարբանալն ի քարտիս և ի պգայարանս. և այս՝ ոչ միայն ներկայից, այլ և բացականաց և ապագայից նկատմամբ: Այս երկու ամենատնտոյզ սկզբունքներէն՝ ինչպէս պտուղն ի ծառէն՝ յառաջ կու գայ և այս երրորդ ճշմարտութիւն, թէ տառահանգիպութիւնն ուրիշ բան չէ և չպիտի լինի, եթէ ոչ ըստ կարելոյն՝ ճիշդ փոխադրու-

թիւն ձայնից և անուանց՝ մէկ լեզուէ մը՝ ի մեկնս:

Սակայն ձայնից և անուանց փոխադրութիւնը, — տառից ձեռքով, — այնչափ աւելի կամ նուազ կատարեալ կ'ըլլայ, որչափ որ այդ փոխադրող և փոխադրելի տառերն աւելի կամ պակաս իրարու համադր ըլլան իրենց ներքին զօրութեամբ և արտաքին ձեւակերպութեամբ: Այս պարապօրէն մէջ նկատողութեան անուանելու կէտ մ'ալ և ազգի մի՝ ուրիշ ազգի, և լեզուի մի՝ ուրիշ լեզուի հետ ունեցած ազգակցութիւնը, կամ օտարութիւնը: Հնդեւրոպական ընտանիքին, — բայց ի մասնաւոր լատին լեզուին, — պատկանող և անոր Այբուբենը կիրարկող լեզուներն, ըստ ինքեան աւելի կատարեալ կերպով իրարու հնչումները փոխադրելու յառկութիւնները կը ներկայացնեն, քան թէ սեւմական լեզուներու ձայները. այսպէս ալ փոխադարձաբար կարելի է ըսել վերջոյս համար. օրինակ իմ, ասորին՝ շատ աւելի դիւրութեամբ և ճշգրտութեամբ կարող է փոխադրել երբայական հնչումները, քան արեւմտեան կամ լատին որ և է ժողովուրդ: Հելլէն ժողովուրդը, թէև չ'այոց կամ Պարսից աւելի դրակից է քան զՎերմանացին, սակայն այս վերջինս շատ աւելի դիւրութեամբ և ճշգրտութեամբ կ'արտաբերէ այսօր հայեցի կամ արիական հնչումները. վասն զի սորա ինչպէս նախկին խանձարուքն, այսպէս և լեզուի կազմութիւնը արեւելքի հիւսիս — արեւելեան ուղմաններուն վրայ եղած է երբեմն ժամանակի: Սակայն այսպէս կամ այնպէս՝ բան մի, որուն կարեւորութիւնը մեր կարծածէն աւելի մեծ ըմբռնուած է և տարածուած համեմատական լեզուաբանութեան այժմու շրջանակին մէջ, են ձայնք և հնչմունք: Մինչև այս դարուս կէտը՝ բանասիրաց մեծագոյն մասը կը կարծէին՝ թէ հնդեւրոպական լեզուաց իրարու հետ ունեցած ազգականութիւնն և իրարմէ առած ծագումն մը ցոյց տալու համար՝ հարկ է, որ օրինակ աղագու, հայերէն կամ յունարէն և կամ մի այլ հնդեւրոպական լեզուի բառերն ոչ միայն իմաստաւոր, այլ նոյն իսկ տառահանգիպութեամբ և հնչումով նոյն ըլլան: Միծառնունքով իսկ այս կարծիքէն էր. բայց այսօր Մաքս Միլլերի, Հելպլմանի, Բէնֆէյի, Դէյբրիկի և ուրիշ հետիմակաւոր բանասիրաց հնձանբեր գիտերով խնցուեցան, թէ այդ դրութիւնն անճիշդ և սպարդիւն է և դեր. վասն զի հնդեւրոպական լեզուաց իւրարմէ կամ հին արիականէ տարբեր կարծուած այն անբաւ բառերն իսկպպէս ուրիշ բան չեն՝ բայց եթէ մի և նոյն արմատներն

և ամանցներ, որոնք հնչականութեան անտեղիտալի օրինաց ձեռքով յընթացս դարուց եղանակաւորուած, յայսպէսուած և տարբեր ձեւեր չէ կարգաւ ինչ յայորդող սերնդոց մէջ կային 1886 հրատարակած քառահատոր Հրեղեւորական լեզուաց համեմատադասեան հիմնական փերականութիւն մակագրուած երկաւորութիւն, և չիտանալ հնչականութեան օրինոք կատարուած՝ 20էն աւելի լեզուաց կողմութեան և զանոնք մինչեւ ցայսօր քողարկող զարտեհաց վրայ։ Այդ, այդ հնդեւրոպական լեզուաց համատարած ծովուն մէջ, յորում և հայերէնն ունեցած է բարեբարդաբար իւր տեղին՝ քերականական ութ մասամբք բանից, — իբրեւ ի ինքն հայերէնով կը տեսնուին հին և նոր ձեւոց կմախքն և կազմակերպութիւնքն՝ իրերաց առններ, որոնք իբրեւ միահօր և մօր հարապատ քոյրեր՝ ձեռք ձեռք ատուած տիեզերաց մեծ թատերարեւմին լեզուաց համատարած ծովուն մէջ, յորում և ոչ վարդապետութիւնք տառահանգիւթեանց։ Եւ իբրեւ, եթէ ժամանակաւ նոքա լուծ կամ դադրած ըլլային, մենք երբեք չպիտի ունենայինք հնդեւրոպական լեզուաց ընտանիքին մէջ այնքան բազմազան ձայները, հարիւրաւոր և հազարաւոր գաւառաբարբառները։ Միթէ այս իսկ չքննող յայտնակ մի չէ՞ հնչական վարդապետութեան։

Ինչքէ՞նչ համարաւտենչ բանասէրն սքանչացած այս երևութիւն հանդէպ, կը գրէր յամին 1869, թէ լեզուագիտութիւնն ինչպէս լեզուաց գործադրական ծանօթութեան և բանասիրութեան, այսպէս նաեւ ուրիշ հրահանգաց հետ աւելի կամ նուազ կապուած է։ Լեզուագիտութեան կորիզն և սերմնն է բառն. վասն զի բառերով կ'արտայայտուի լեզու մի։ Սակայն բառն ինքնին կը կազմուի յօգաւոր ձայներէ, որոնք զգացմունքներ և գաղափարներ կ'արտաբերեն՝ ներքին թանկ կամ թանձրութեամբ, արտաքին կամ խժալուր կերպով, կրթուած կամ վարձնաձայն, աղիւսգուր կամ փոտածաղիկ ձայնարկութիւններով։ Կողբանութեան և լեզուագիտութիւնը կը միանան աստ հետեւեալ հարցով. ինչպէս կ'ընէ մարդ իւր ներքին կեանքը՝ ի լեզուական կազմակերպութիւն. ինչպէս կ'ընէ նա այլը՝ խօսուն։ Այս

հաւաստի երկու գլխաւոր կէտեր, վարդապետութիւն հնչմանց և լեզուագիտութիւն։ Ով որ ձայնականութիւնը և յօգաւոր հնչմանց վերաբերեալ քննաստութիւնը լաւ ուսումնասիրած է, պիտի տեսնէ ասկեղբեւ, որ երկուքն եւս դրականապէս կը նպաստեն լեզուագիտութեան։ Միով բանիւ, հոգեբանութիւնն իւր յարակից հրահանգներով մէկ կողմէն, և միւս կողմէն այլ քննաստութիւնն, որ կ'ուսումնասիրէ հնչումները, կը կազմեն այն զընթաւոր հիմք, որուն վրայ կը բարձրանայ լեզուագիտութիւնը կամ լաւ եւս ստուգաբանութիւնն։ Այսպէս ուրեմն ձայնագրոց զարգացման և բազմաթիւ ժողովրդոց մէջ տարածման ձեռքով յայտնուեցաւ, թէ պէտք չէ նկատուի բանը կամ խօսքը իբրեւ անանշատ ամբողջ մի, այլ վերլուծել իւր հնչական տարրերաց։

Իսկ Մաքս Միլլերը յառաջ անցնելով, կ'ըսէ. Ինչպէս երկրաչափութեան մէջ մեծ աղտէք մի չունի գիտնալը, թէ արդեօք ուղղանկիւն եռանկեան մի՞ երկու երեսաց քառակուսւոյ զուամարն հաւասար է ներքնաձգի քառակուսւոյն, այսպէս և զոյգն արժէք ունի ստուգանքանութեան մէջ՝ իմանալը թէ, օրինակի աղագաւ, հայերէն կիկը՝ տառահանգիւթութեամբ կամ ձայնանիշերով նոյն է սանա կրիտ gna = գնա, կամ ռուսերէն ժենա (жена) բառերու հետ։ Եթէ բառերն իրենց սկզբնական տառահանգիւթութիւնքը կամ հընչումներն, ինչպէս նշանակութիւնները, անփոփոխ պահէին, այն առեւ լեզուն ընդանրապէս ընտա պատմութիւն չպիտի ունենար, լեզուաց խառնակութիւն երբեք չպիտի լինէր, և այժմեան մեր լեզուն առաջնաստեղծ նախահարց լեզուին հետ նոյն պիտի ձուար։ Այսպէս նոյն իսկ լեզուի էութեան մէջ կայացած է անձեւու և փոխիւթուելու ընդունակութիւն, ինչպէս և յառաջագոյն զարգացուած մը. և այդ փոփոխութեան, անման և զարգացման զօրքը և գործօն պատճառներէն մին է և՛ հնչականութիւնն։ Ուստի՝ հնչարանութիւնն այս տեսութեամբ միայն, այսինքն է իւր յեղափոխող շարժման և զարգացմամբն՝ համեմատական լեզուաքննութեան հիմնաքարերէն մին եղած է։

Ի հարկէ ինչպէս ամէն գործիչ՝ այսպէս և հնչականութիւնն ունի իւր գործունէութեան ընդհանուր և յատուկ օրէնքները. վասն զի բնութիւնն ընդոստոյններ չընեն, այլ զանգաղ և յարատեւ կ'ընթանայ։ Բայց թէ որոնք են այդ օրէնքն, որոց անդիմադրելի զօրութեամբ տեղի տուին ազգեր և լեզուներ և կու տան տակաւին, բանասէրք կատարեալ կերպով դեռ յայտնած չեն գա-

նոնք, սակայն յայտնեալներն իսկ շատ քնա-
կան են և բանաւոր:

Ըստ Կուրտիուսի՝ Հնչյանց փոխոյութեան
կամ ձայնափոխութեանց օրէնքն կրկին են,
ներքին, հաստատուն և առանց բացառու-
թեան: Այսինքն են, զիւրաքիւն կամ քնա-
կան ձկառում մարդկանց՝ առ դիրքին, և
նմանորիշ և նամեմատական: Այս անոր իսա-
քերը. « Դիւրութիւնն էր և կը մնայ գլխա-
ւոր շարժառիթ Հնչյանց ձայնանշաններու
փոփոխելուն, յամենայն պարագայ կե-
նաց: Բայց դիւրութիւնը կ'արտայայտուի
կրկին ուղղութեամբ: Միանգամ՝ յօժարա-
փոյթ փոխանակելով գոժւարահնչիւն արտա-
սանութիւնքը դիւրահնչիւններու, և ապա
կ'որոշէ իրեն համար՝ իբր սովորական կանոն՝
Հնչափոխութեան այն ուղղութիւնը զիմելու
ի յետնոցս դէպ ի յառաջ, և ոչ ընդհակա-
ռակն: Այս կերպով, օրինակի աղագաւ, կը
ծագի կ (k) էն պ, բայց ոչ պէէն՝ կ (k):
Այսպէս ուրեմն պայթիւնաւոր կոչուած հըն-
չումներն կը փոխանակեն քմայիններուն և
կը յառաջեն, երբ հակակիր ընթացք մի
արգելիք ի լինի անոր: Այսպէս եղաւ տ
(t) u (s), բայց ոչ u՝ տ »:

Նմանութեան օրէնքը Կուրտիուս ըստ բա-
ւականի մեկնած չըլլալով, նախադաս կը
համարիմ Քրուզմանէն հետեւեալ աղուա-
ծօրէն մէջ բերել, որ կը գրէ (Kuhn's
Zeitsch. 24,50 und Morph. Unters. 82
ff.), թէ նմանութեան գործողութիւնքը առ
տառն տակաւ յառաջ կու գան, այսինքն
է՝ նախ մէկ ձեւ մի, ապա երկու, այս եր-
կուքն՝ երեք, չորս, հինգ, և այսպէս յա-
ջորդաբար մինչեւ հազար և աւելի ձեւեր
կարող են առնել, այնպէս որ՝ կարելի է ը-
սել, թէ մի քանի ձեւեր միայն իբրեւ են-
թական՝ ծառայած ըլլան այն հազարաւոր-
ներուն:

Յիւրակ, օրինակ մի միայն մէջ բերեմ ի
հաստատութիւն և ի հասկացումն ըսած իս-
այսինքն է, Հին պաւական jesmī, vemī,
damī, jamī կարող եղած են նոր սլաւոնա-
կան և նոր սերբիական լեզուաց մէջ ամէն
լծորդութեանց բայերը, եղակի առաջին դէմ-
քերը և տառով վերջացնել:

Իսկ ուրիշ բանասէրք յառաջ քան զՊոպ
ուրիշ բացատրիկ օրէնքներ եւս կը գնէին՝
իրարմէ այնքան տարբեր լեզուաց կազմու-
թեան, բայց ի մասնաւորի կլիմայից տար-
բերութիւնը, որ սեռական կ'ազդէ ժողովրդոց
ձայնահան գործեաց վրայ, և կու տայ զա-
նազանի խիստ դժուարեւոյն վայրի լեռնաբը-
նակ ակոնացիէն, և մեղմ յոնիացոյն՝ նուրբ
ատոմացիէն, ինչպէս և սորայս ի Փօքըր Ա-
սիացոյն, և այլն:

Չիտեյ (W. Jolly. 230), սաստիկ պա-
տերազեցեալ այս կարծեաց դէմ. սակայն
Ռուրթ ձեռք գրկաւ վերստին պաշտօնեւ
գայն: Բանասէրս կը յիշէ՝ ի մէջ այլոց փա-
տից՝ նաեւ Հետեւեալը. այսինքն թէ, Կով-
կասում մինչեւ անցած Հին ազգակցութիւն
և դրացութիւն չունեցող ժողովուրդներ,
որպիսիք են Հնդկագերմանական Հայեր, և
իրանեանք, և ոչ Հնդկագերմանական վրա-
ցիներ և այլք, գրեթէ նոյն դասաւորութեամբ
ձայնաւոր և բաղաձայններ ունին: Ներքա-
պէս մի և նոյն բարբառը կը տիրէ կամ կը
տիրէ երբեմն անոնց մէջ, ինչպէս այլ և այլ
կողմեր վերջին տարիներուս մէջ եղած Հե-
տազօտութիւնքը ցոյց կու տան մեզ ակնե-
րեւ, շարունակ անցեալ մը տեսած են անոնց
իրաքանչիւրին մէջ գրեթէ լեզուին ամբողջ
լուծութիւն կազմող գաւառաբարբառներն: ()-
րինակի աղագաւ, գերմանականին մէջ՝ աղե-
մանամ կոչուած Ալպեաններէն՝ մինչեւ Ստո-
րին Սաքսոնիոյ Հիւս. արեւելեան ծովա-
փունքն: Ինծ համար անբմբոնելի կը լինէր,
եթէ այսպիսի շարունակութեամբ՝ ազդեցու-
թիւններ ունեցած չըլլայ անոնց վրայ, - ի-
բրեւ գործած պատճառ, - նաեւ կլիմայա-
կան անցքերու շարունակութիւնը: Իէ՛ձէն-
բերէր (Gött. gel. Anz. vom 21 Mai, 1879), Սիվերէս (Laut physiologie. S. 127)
Բ. Դէլբրիկ (Einleitung in das Sprachstu-
dium ein Beitrag, Leipzig 1880), Ա-
կոլի և այլք, գեռ աւելի մանրամասն ու-
սումնասիրած են Հնչականութեան բացատրիկ
և բացարձակ օրէնքը:

* *

Արդ՝ մեր գրոց և գրականութեան նախ-
կին գորիք՝ Ս. Սահակ և Մեարոպ, ոչք հիւրթ
և քալածանօթ էին իրենց դրակից ազգաց
լեզուին և տառահնչիւններուն, այս Հինան
վրայ հաստատուած և այս նպատակով աշ-
խատեցան ընդերկար, հայկական լեզուին ըստ
կարելոյն կատարեալ տառեր կամ ձայնա-
հան գործիները հարելու, այսինքն ստեղծել
այնպիսի տառեր, որք ոչ միայն իրենց բազ-
մապատուաստ Հնչյանց, այլ նոյն իսկ իրենց
դրացի արիական և սեմական ազգաց Հըն-
չումներն եւս ողջ արտասանելու ատակ լինէին.
Վասն զի մտադիր էին Յունաց, Պարսից և
Ստորեց գրութիւններն յեղով ի հայ բար-
բառ: Այս համոզումս ի վաղուց յայտնու
եմ, և ուսումնասիրելով աւելի հաստահիմն
գործած: Միայն դանիէլեան նշանագրերով
կարելի չէր յունական Հնչումներն ողջ ածել,
և ոչ իսկ յունական 22 տառերով՝ ասորա-

կանը ողջ բովանդակ արտասանել, վասն զի օ իկմայ մի չունէր ասորի Տ = ծ, Տ = ս, և Տ = շ ձայները, և ոչ ալ = ջ (լատինայ) պարսկ. դայիին ձայնը, կամ չ = քի՝ ասոր. խէթին, այսպէս և որ ի կարգին: Այո, այս և բնիկ լեզուի թորդ՝ բայց այլապէս Հնդեւեաները փոփոխորեալ համար է, որ կը Հնարեն, բաց ի յունաց π, β, φ, τ, δ, θ, ζ, γ, χ եռաստիճան տառերէն, նաեւ ծ, ձ, ց, ճ, ջ, շ, լը՝ ծորդ եռաստիճանները, ինչպէս նաեւ չղղա՝ ժանն շ, և հ և դ և խ հազագայինները: Ասոր համար է ըստ իս Ս. Մետրովայ մերթ առ Ասորիս և մերթ առ յոյնս գեգերին, նոյն իսկ յետ գիւտի դանիելեան տառից. այսինքն՝ զարձաւ լսել և ուսումնասիրել երկաքանչիւրի հարտասանից և սփեւտէս ներու բերնէն անոնց կենդանի ձայնի Հըն՝ չումներն, և այն Հնչմանց գործիք եղող տառից ներքին և առանձին զօրութիւններն, և իրարու քով եկած ժամանակ անոնց ձայնեալու յեղանակաւորումն և կրած փոփոխութիւնքը:

Առանց այս մեկնութեան անհասկնալի կը մնան Հայոց Կաղմոսի կրած տագնապն և ի տար աշխարհ երթեւեկութեամբ պանդխտանալն. ապա թէ ոչ՝ առանց Կաղմոս ըլլալու իսկ, մանաւանդ թէ առանց այլոց ձեռնտուութեան կարելի էր նիւթական ձեւով, բայց անյարմար ձայներ արտասանող նշանագրեր Հնարել, թէպէտեւ Հանգոյն դանիելեաններուն անոնք եւս պիտի մնային միշտ մեղեալ տառ:

Արդարեւ, տեսականէն անցնելով մեր այս բուրենի կազմակերպութեան և քանիօնութեանը, իրօք կը տեսնենք՝ որ ոչ միայն վերոյիշեալ ազգաց, այլ և նոր լեզուաց Հըն՝ չումներն արտասանելու զօրութիւնն ունին յինքնանոս: Աւելորդ կը համարիմ Համեմատութեամբ դնել այս տեղ մեր և յիշեալ ազգաց տառերու կարգն ու շարքը. վասն զի ժամանակաւ թաղմովիպի մէջ ըստ իմս տեսութեան կատարած եմ այդ ծառայութիւնը:

Տառերն այսպէս պատրաստելէն վերջ՝ կը մնայր Մետրովայ և Սահակայ՝ անոնցմով ուրակացնել և մարմնացնել այն ամէն ձայն և բան, զոր իրենք կը խօսէին և լսէին իրենց կենդանի ժողովրդում մէջ, և զորս հանդերձեալ էին փոխադրել յօտար ազգաց կամ ի գրոց: Այս վերջեաց համար եւս Հարկն այնքան անհրաժեշտ էր, որքան Հայիքի հընչմանց տարրացումսն: Ուրիշ կերպ մտածելն՝ ոչ միայն Հակառակ է Հնդկագրեման ազգերու Համեմատական լեզուաքննութեան, այլ նոյն իսկ Արեան և Ղազարայ մեզ առանդածներուն:

Մետրովայ և Սահակայ՝ մեծ թարգմանչաց՝ մազմաքերան լայնիւք և Հնարագիտութեամբ կատարուած այս երկրորդ գործողութիւնս, որուն վրայ ոչ ոք ըստ արժանոյն խորհեցաւ և խօսեցաւ մինչեւ այսօր, թերեւ զժուարապոյն էր քան զգիրտ սյուրբերնից. վասն զի այս վերջիններս, — ինչպէս ըսուեցաւ, — առաջին պատճառաւ եղան այնքան տաժանելի և անմոտանալի մեր պատմադրութեան մէջ: Այո, յունական տառերու դիմաց մետրովեան տառերը դատաւորելէն վերջ, անոնց լեզուի ձայներն եւս միանգամ ընդ միշտ դիւրութեամբ պիտի փոխադրուէին ի քարտիսի: Իսկ իրենց մինչեւ այն ժամանակ միայն ժողովրդեան բերնին մէջ կեանք ունեցող Հայ քարառոյ բոլոր անուններն և ձայներն առաջին անգամ առիթ ունէին ի գիր արձանացնել. և ինչպէս արձանացնէին, երբ ամէն գաւառացի, և ամէն բերան ունէր իւր տարրեր Հնդեւեաները. զի Սահակ ինքնին և Մետրովայ կարող էին, մին՝ իրրեւ այրարատցի և միւսն՝ տարծնացի իրարու Հակառակ արտասանել: Ուրեմն՝ կը մնար նախ բնախօսական և ձայնական օրինաց, և ոչ թէ ըստ քմաց որոշել, թէ ձայնս հաց՝ խելյով և ծայով խած գրելու է, թէ ընդհակառակն, Հոյով և ծայով, Հած, կամ ծայով Հած, և կամ ցոյով Հաց: Այսպէս նաեւ ձայնս չուր՝ քանի որ դեռ գրուած չէր, կրնար մին Հնչել ձաշ, ուրիշ մի՝ չուր, ուրիշ մի ծուր, չորրորդ մի ցուր. այսպէս Հասկնալի է և միւս տառերով գրուելիք ամէն ձայնից համար:

Մենք տակաւին հաստատ կերպով չենք գիտեր, թէ արդեօք այնքան գաւառաբարբառներուն մէջ՝ գէթ ընդհանուր ծաւալ և ազդեցութիւն ունեցողներէն՝ որոնք արտասանութիւնը ընտրուեցաւ ըլլալու դպրութեան լեզու. արդեօք այրարատեանը, թէ ընդհակառակն Տարսնին, կամ Սիւնեաց, թէպէտ և այրարատեանն՝ այլ և այլ պատճառներով մեզ աւելի Հաւանական եղած կ'երեւի: Սակայն բան մի, որուն վրայ բնաւ չենք տարակուսիր, այն է, թէ մեր թարգմանիչք՝ այսպիսի պարագայից մէջ՝ բունախօսութիւնն և ձայնախօսութիւնը կամ Հնչաբանութիւնը առին իրենց իրրեւ Հաստատուն և ապահով կանոն, Հայկական կենդանաշունչ ձայներու այն թուհրուէ կարգաւորելու, ինչպէս Մովսէսն ալ Սատեօյ արարչագործող և տիրաւորման բանը և ձայնի՝ տիեզերական նախատեսող խառնակութենէն այս գեղեցիկ աշխարհքս կարգաւորելու ժամանակ: Առ այս մեծ հմտութիւն Հարկաւոր էր՝ Սահակայ և Մետրովայ՝ յոյն և ասորի ոչ միայն քերականական կանոնաց, այլ և այն լեզուաց և

ձայներու արտասանութեանց, տառերու յարափոփոխ յեղանակաւորման կամ փոփոխութեան, վանկերու յաւելմանց եւ յալաւմանց, երկական եւ սղման, չիշտաւորման. այսպէս նաեւ լեզուային, շրթնային, հարազատին, քմային, չչական եւ արտաբերութեանց:

Սյո՛, այս յաւէտ յիշատակի արժանաւոր դորոճութիւնս՝ յետ առաջնոյն՝ անմիջապէս չիշտած են նոյն իսկ Ս. Թորենացի եւ Վազար եւ Կորիւն: Պատմագիրներէս առաջինը՝ Ս. Գրոց Թարգմանութիւնը ձեռնարկելէն յառաջ՝ կ'աւանդէ (Գ. գլ. ԾԳ) Ս. Մեարոպայ կամար. « Փոխադրելով զհայերէն աթուրթայսն՝ ըստ անսայթաքութեան սիւզաբայից Հելլենացոց »: Իսկ Ղազար գրեթէ բոլոր առ բոլոր կրկնելով այս տեղին, անդրէն վրայ կը բերէ եւ պարթեւ Հայրապետի մեծագոյն արդիւնքը, ըսելով. « Յերիտիւնով գնա սուրբ հայրապետին Հայոց Սահակայ, դիտահարձանապարճ ցոյցանէր կարգաւորութեան գրեկոյս եւ հեզեկային ողորդանշանութեան »:

Թորենացւոյ յիշեալ տեղին՝ վանկերու բաժանման վրայ հասկնալ կ'ախորժին ոմանք, ի նկատի առնելով « սիւզաբայից Հելլենացոց » բառերը: Սակայն այս չկարէ լինել ճշմարտ. վասն զի հակառակ է ոչ միայն առաջադրեալ նիւթոյն, որուն վրայ կը խօսուի, այլ եւ Ղազարայ եւ Կորեանի ֆիբուրի, առ այս դիտել կու տամ, որ Թորենացւոյ յիշեալ տեղոյն մէջ փոքրիկ խանգարմունք մ'եղած է, ոչ վասն եւ անհասկնալի զարձած: Այո՛, անոր հարազատ իմաստը կը գտնենք Ղազարայ քով, այսպէս. « Փոխադրելով զհայերէն աթուրթայի ի հելլենացոյցն՝ ըստ անսայթաքութեան սիւզաբայիցն »: Սյո տեղ նախ դիտել կու տամ, որ բառաւորապէս փոխառութիւն է ասորերէն *ἡ ἀποκρίσις*, ըստ Հիւլալմանի (Սիմակ. փոխ. բառ. հայերէնի մէջ) այն է նրանցդիրքը: Չախլախեան՝ « Distinzione di suono o di pronunzia dell'abbici », եւ այն Թարգմանած: Բ. Միացնելով Ղազարայ վերջին բառերը՝ քիչ յառաջ մէջ բերումս ներսն էնտ, չինք տարակուսիք այլ եւս՝ եղբակացնելու, թէ ի հելլենացոյցն կամ լաւ եւս յունական արիւսպագնէն փոխառեալ 22 Մեարոպեան կամ Հայացած տառերն եւ տառահնչումներն են, զորս Սահակ եւ Մեարոպ կը լանան կարգադրելի համաձայն յոյն բնագրի սիւզաբայից, եւ կամ նոյն յոյն Ղազարայ բացատրութեամբ՝ « ըստ ուղղաձայնութեան գրեկնոյ եւ հեզեկայից »: Այսպէս կարգաւորեցին՝ ըստ իս՝ նաեւ գտնիլէլեան Հին տառերը՝ ասորի տառերու եւ հեզեկայից ուղղաձայնութեան համեմատ, որչափ որ կարելի էր:

Ստուգիւ, մեր տուած մեկնութեան այս երկու կէտերն եւս լիովին կը հաստատուին նշանագրոց գիւտին եւ կարգաւորութեան գրեթէ ժամանակակից, գոյցէ և ակնանտես, Կորեան վկայութեամբ: Մեարոպայ կենսագրութեան հեղինակը նախ կը ծանուցանէ, թէ Մեարոպ՝ Ասորոց Սամուսատ քաղաքին մէջ, զոր չէ պարէ շրթից յունական Սյո մտնի հետ, — հնարեալ « նշանագիրս հայեկէն լեզուին, եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ եւ կարգեալ, յորիկեր սիւզաբայից եւ կապօր »: Հարկ կը համարիմ դիտել տալ, թէ այս տեղ յոյն կամ հելլէն բառերու բնաւ յիշատակութիւն չկայ. Հետեւաբար՝ զործն իսկ դեռ ասորի գիտնականաց Հետ է, որոց լեզուին քաջածանօթ էր նա ինքն Մեարոպ, եւ որոնցմէ ընդունած էր եւ պատուանունս Մար-Սրոյք կամ Մարոպ: Բառս այս՝ սիւզաբայ՝ թող բնաւ չի գայթակղեցնէ զոք, իբր միակ եւ անդրադիւ ծնունդ Հելլէն լեզուին: Իսկ երբ իւր վերջին հրաժեշտը կու տայ Մեարոպ ասորի փիլիսոփայից եւ եպիսկոպոսաց, եւ կը դիմէ առ գրչին Հելլենական դպրութեան Հռոփանտս, անդէն երկրորդ զորոճութիւն մ'եւ կը սկսի կատարել, զոր այսպէս կը նկարագրէ Կորիւն. « Որով (այսինքն է Հռոփանտիս) ցամեկայն ընտրութիւն նշանագրոյն՝ զնորագոյնսն, գկայնն եւ զերկայնսն, գառանձինն եւ զկրկնատեան միանգամայն յորինեալ եւ յակնուցեալ ի Թարգմանութիւն գառնային »:

Բնաւ տարակոյս չի վերցնէր, թէ այս տեղ, — այո՛ միայն այս տեղ, — Կորեան խօսքը կը դառնայ Յունացմէ փոխառեալ տառերու կարգաւորութեան վրայ (ինչպէս կանխաւ՝ անոնց գիւտին), զորս Մեարոպ հայերէնի կը փոխադրէ, Հելլենական կարճ ձայնաւորին եւ երկայնին ողջայն կամ Հնչալանութեան համաձայն: Մարգուլունից յիշատակութեամբ՝ միլին եւ թաւ բաղաձայնիւր աստիճաններն եւս լուեան եւ հաստատէ: Ասանձինն բառով՝ մի միայն նուրբ կամ այլ Հնչումն ու նեցող եւ գրուող ձայնաւոր եւ բաղաձայն տառերը կը ներկայացնէ. իսկ կրկնատեան (յ. ճէ ԳԾԵՅՅՈՒԱՅ = կրկնահնչումն) թէ ձայնաւոր երկարաբառներն եւ թէ Է, Փ եւ մնացած բաղաձայններու իրարահնչդիպումը: Որինակի սագագաւ, աւ, ԿԾ. ԳԾ եւ այլն:

Արդ՝ ասկէց ակնբերել կը տեսնուի, թէ յունարեմէ փոխադրուած Հայկական տառերն, իրենց ամբողջութեան մէջ նկատուած, լոկ մեքենական կամ քերականական առնչութիւն մի չեն կապում իրենց դիմաց դասուորուած բնագրի տառից Հետ, ինչպէս վրիպակաւ կը կարծեն ոմանք, այլ արժեքով եւ

ձայնահանութեամբ իսկ զրեթէ Հաւասարա-
գոր են. վասն զի անոնց արտաքին ձևերը
միայն ըստ մասին կերպարանափոխուած են:
Թող չկարծուի, դարձեալ, թէ Հայերէն ձայ-
նաւորաց մէջ չկան անուանալէն երկայն և
կարճ, և թէ մեր Թարգմանիչներն՝ վանկերը
չբազմացնելու համար միայն յունական երկ-
արբարաններն համառօտած են. վասն զի մեր
հին ֆեռականագիտաց թով կը գտնենք ամէն
ինչ: Ուրեմն՝ մինչևև հիմա ըստածներէն կը
հետեւի, թէ մեր նշանագրոց գիշտի և դասա-
տրութեան մէջ իսկ, իրենէ տիրող օրէնք,
իւնաճրով դիտուած և հոգացողած է ձայնից
և ձևիմանց ըստ կարեւորն անկրար պահպա-
նողքինն, և քի տառնալիկադրիչինն աւելի
ստանց մէջ կը կաշառայ, քան թէ նիթապէս
և անընտրողաբար ամէն անգամ ամէն տառ
փոխադրելուն, որով բաղաձայն երկարաբառ-
ներուն մէջ շտուած և խալալու անտեղու-
թիւններ յառաջ պիտի գային:

Տառերու կարգաւորութիւնէն անցնելով ա-
նոնց կիրառութեան, նոյնսկզբունքը անխախտ
պահուած կը գտնենք ընդհանրապէս, թէ՛
իրենց բնիկ բարբառոյն և թէ՛ յոյն, ասորի
և պարսիկ անուանք և ձայնից փոխադրու-
թեանց մէջ: Բացառութիւնք խիստ քիչ են,
և այն իսկ մասամբ գրչապագայ յոսի ընդօ-
րինակութեան և խանդարմանք պատճառաւ,
և մասամբ ալ այս երեք ազգաց լեզուական
կանոնաց կամ ձայնափոխութեանն ընծայելի
են: Ուղղակի օրինակներու դիմելէն յառաջ՝
աւելորդ չեմ համարի բանուցանել նախ,
թէ յիշեալ լեզուաց անուանք փոխադրելու
մէջ՝ անոնց առանձնակի բաղաձայներու տառ-
հանդիպութեան խնդիրն՝ երկրորդական նշա-
նակութիւն ունի մեզ համար. վասն զի յայսմ
բացառութիւնք խիստ քիչ են, այնու մա-
նաւանդ, որ մեկնակ տառից փոխադրու-
թեանց հետ՝ բնականապէս անոնց յատուկ
ձայնք իսկ օրոյակի կը փոխադրուին: Հե-
տեւաբար, ուրեմն, թէ՛ ինձ և թէ՛ առաջար-
կեալ խնդրոյս համար մեծագոյն կարեւորու-
թիւն ունեցողքն են նախ ձայնաւոր և ապա
բաղաձայն երկարաբարաններն, որոց մին, -
այսպիսի պարագայից մէջ, - կամ ինքն սով-
որողապէս, և կամ իւր ձայնը կը կորսնցնէ
միւսից զօրութեանն առջեւ: Արդ՝ այսպիսի
ձայնական պարագայից բերմամբ և ապա իսի
տառեր և վանկեր են, զորս յաճախ մեր
նախնիք մէկ տառի վերածած են և սղած.
և երբեմն ալ ձայնը պահելով՝ գիրը մէկդի
թողած են, իւր աւելորդ: Օրինակ իմն,
Ἀγγελοσ Անգելոս, Ἀγαθάγγελος Ագա-
թանգելոս ըրած. այսինքն է՝ γ = ն, Այս
տառից նկատմամբ իմ նախորդիս բերած

փաստը կրնանք ենթադրական մակարոյսի մի
նմանեցնել, որ նորա տառահանդիպութեան
մասին ունեցած անձնական կարծիքն հաւ-
տատելու տեղ, իրօք անոր ոյժը կը սպառէ,
զիտելով որ խնդիրն միայն ՍՄՄ մասնիկով
բաղադրեալ բառից համար չէ, այլ Հապա-
րաւոր ուրիշ կազմութիւն ունեցողներու: Եւ
նոյն իսկ այդ մասնեան մէջ, օրինակ իմն
ՍΥΓΧΛΗΤΟΣ, նիթական տառահանդիպութեամբ
Սիդիկիտոս ըրած չեն նախնիք, այլ Սինկ-
դիտոս. և Ինչպէս կ'ուզէիք որ ընէին, երբ
γ = գ միակի բաղաձայնէն վերջ անկարելի
է x = և չնչել. իսկ եթէ վերջինս յապակե՛ր՝
նախորդ տառը λ = զ ին թով գծուարանը-
նելի պիտի դառնայր: Ըսածս պարզ է յոյն
բարբառին տեղեան եղողաց համար. երկնցը-
նենն աւելորդ է:

Այսինք նախ՝ մեր նախնեաց ձեռքով հա-
յերէն լեզուին մէջ փոխառեալ յունարէն ա-
նուններով. և առաջինն Հնչածս բառն է՝ Ρωμα,
որ յաւելուածով Հառաին եղած է Հռօմի.
այսպէս և ծիցոս = Հոնտոր, Έρωτις = Հեր-
մէս, Ξένος = Հեթանոս, ἄλγη = Հալուէ,
այսպէս Հերակլէս և այլք բաղումբ: Պատ-
ճառն, անշուշտ պիտի հարցնէք. խիստ չնչին՝
բայց յարգուած է այն ի նախնեաց մերոց.
այսինքն՝ ութից վրայ գրուած այն խիստ փշիկն,
որ հագագափառ ձայն կու տայ՝ իւր հ: Πάπ-
πας և Ἀποτάππας Թարգմանուած է մէկ
պէտով Պապ, և Ապոպապ. որովհետեւ այդ
երկու տառերն թովէ թով գալով իսկ՝ մի և
նոյն չրթնային ձայնը իր հանուն, ըստ յու-
նարէն քերականաց: Χάγχελον եղած է կոն-
կեղ, κόγχη = կոնք. γόγγυς = գոնգ, γογ-
γισιον = գոնգիարիոն, γογγύλη = գոնգեղ,
ἐγκώμια = (առ Փաւստոսի) կնկովմա, εγ-
χειρίον = կնքիւր, Εγκλῆσιαστικός (առ Խոր.)
եկղեսիաստիկոս, ἐλλέβορος (Խարս. վեց.) մէկ
դատով կերորոս եղած է, βαλλιστρα = բա-
ղիստր, σύμβολον (առ Կիւրղի Մեկն.) յիւն-
բողոն, Ա. Մակ. և Աթ. Թրգմ. մէջ γ.
χάραξ = քարակ Թարգմանուած է, αἶψ =
այծ, περὶ = պերի, παρά = պրակ, σύριγγ =
սրինգ: Ուրեմն յուն. Ἐ տառի փոխ. քս Թարգ-
մանուելու՝ փոփոխակի ծ, կ, գ եղած է.
վասն զի բառակերբին կը կորսնցնէ իւր
ստատկութիւնը: Յայնուրեքեան մէջ σχιζοδός
եղած է շիզոս, և այլուր μολόχη = մուլոչ,
μαυδραγοράς = մանրագոր. ἀχάτης (Եւ. և
Եղն.) = սկաւտ, σέλαχος = սեղակ. δάφνη =
դաբնի, δελφίς = զիբի = բառս փալմոս իու-
զանդ և Եղի. և Թարգմանիչը կը գրեն սաղ-
մոս. վասն զի π ձայնը σ չապան տառին
զիմացը կը նուաղի: Πατέλα = քեղեայ, καμ-
ψαχας = կապաակ, σκωφος = կիւփոս, Ολύμ-

πιος (առ խոր.) Ուղիւս, տաճոր = սատեր,
 տրίγων = Տրիգոն ԴՅւմսոխ թարգմանուած է
 Չմշկիկ, λαμπτήρ = լաւտեր, φάλαγξ =
 փալանք, φόσσα = փոս, Ασύριος = Ասու-
 րեստան, μάκκελον մակեղոն (իզն.)։ Այս օ-
 րինակներս բաւական կը համարիմ։ Իսկ ա-
 ւելիւր փոփաքողաց ցոյց կու տամ Հիւսլա-
 մանի, և Բրաքէլմանի ընտրի գրուածները։
 Իսկ եւ այսպէս կը մասնաւորեմ մէջ բե-
 ռուած օրինակաց արդիւնքը, զորս մեր նախ-
 նիք Յունաց Հնչարանութեան օրինաց հա-
 մաձայն փոխադրեցին. այսինքն են, φθ,
 φρ = փ, γγ = նգ, γχ = նկ, γλ = նբ,
 γξ = նգ, ξ = ժ, νδρ = նր, ψ = ս, στ =
 ս, σχ = շ, χ երկու ձայնաւորաց մէջ և ξ
 ի վերջ բառից = կ և դ, σσ = ս, γγ = ղ,
 τξ = շ, ρ = հւ, ζ = հա, ε = հե, υ =
 հիւ։

Այք կը տարակուսին, թէ ըստ դիպաց և
 ոչ ըստ ձայնարանական կանոնի եղած ըլլան
 այս փոխադրութիւնքս, թող ուշի ուշով աչքէ
 անցնեն Կուրտիուրի և Միւլերի յունարէն
 Քերականութիւններն, Կրուզմանի վերոյիշ-
 չեալ գրուածն և յունարէն բառարաններն,
 և պիտի տեսնեն՝ որ անոնց կանոնաց համա-
 ձայն են։ Տեսնենք թէ ասորականէն փոխ-
 առեալ անուանց և ձայնից հետ ինչպէս
 վարուած են մեր նախնիք։ Օրինակները
 Հիւսլամանի յիշեալ գործէն կը քաղեմ, և կը
 քաղեմ այն բառերը միայն, որոց ասորա-
 կան ըլլալն առանց երկրայութեան է։ Աս.
 awila, արեղայ թարգմանուած է. awārā =
 կապար, būsinā = բուժին, šur = ծուր,
 šaida = իշապող, gezzēa = գզթթ, gub-
 ha = գուր, ezwarkā = զուարակ, taggā-
 rā = բանգար, maggela = մանգաղ, šar-
 sūra = քրքուր, lumā (երկայն) = լումայ.
 hrgla (hrgeḷā) = խարագուլ, ārbātā =
 խարբաղի, ḥazzūrā = խնձոր, šessela =
 ժնձղայ, šaumā կամ šoma = ծով, šerrā
 (šerārā) = ծորար, qetgera = կապարձք,
 qatū = կատու, gelāfā = կեղեւ, kufrā =
 կուպր, šefār = չպար, hešawa = հաշիւ,
 megalleša = մագաղաթ, mehatta = մա-
 խաթ, našrāyā = նաժրացի, erūweḷā =
 ուրբաթ, ziqā = սիք, safsēra = սուսեր,
 seššā = ժիծ, kaḥna = քահանայ, karḫā
 = քաղաք, kakkerā = քանքար, ḥāḥur-
 tā = քաջար։

Այս տեղ նախ դիտել կու տամ, որ լա-
 տին տառերով փոխադրուած բառերն՝ ձայ-

նաւոր տառերով ի միասին են, մինչդեռ
 ասորի ընագրոց մէջ առանց ձայնաւորի
 գրուած ըլլալու են։ Բ. մեր նախնիք՝ ասորի
 ընագրոց և ձայնաւոր ձեւերէն՝ միջինով
 թարգմանի են։ Գ. կը տեսնենք, որ այս
 փոխադրութեանց մէջ ասորերէն բէքը
 և փա՛՛ հաւասար բեկի և հոյի փոխուած են։
 Սիւմար = ս, — Սյաղն = ծ, թ, ց, —
 Զային = ձ, դ, ս. — Հէք = խ, հ, ք. —
 Գաիք = կ, ք, — Կաիք = ք, ի, — Պէ
 և Սիւկար = ս. — Պէ (առանձինն) = պ,
 հ. — Գաւալ (կրկին) = նգ. — Տէք = ծ.
 — Թառռ (հագագային) = տ. — Լաւեր
 (կրկին) = դ. — Լաւեր (առանձինն) = լ
 և դ. — Ուլի (հագագային) = խ, հ, ի,
 ինչպէս տեսանք յունարէն տառից փոխա-
 դրութեանց մէջ. — Յիւտ = յ և ց. —
 Մեր խ տառն ասոր. Հէք տառահնչու-
 թեան համար և յունարէն հագագապիւռ
 փշիկին տեղ հնարուած է. դատն ասորերէն
 կրկին լամէթին հանդիպցնելու։ Մեր յ տառն
 ասորերէն Յիւտ բառառային, և բառավեր-
 ջի երկայն ձյրին հանդիպցնելու, իսկ յու-
 նարէնի մէջ ալ երկայն ոտայի տեղ հնա-
 րուած է։ Ուրեմն այս օրինակներէս իսկ կը
 տեսնուի, թէ ինչպէս յունարէնին՝ այսպէս
 ալ ասորի փոխառեալ բառից մէջ կան նիւ-
 թական տառահնչուութեանց հակառակ շատ
 բացառութիւնք։ Համոզուելու համար, թէ
 այդ բացառութիւններն եւս ասորի տառերու
 յեղանակաւորման և Հնչարանութեան կանո-
 նաց համաձայն եղած են, ինչպէս յունարէ-
 նէ փոխառեալքն ալ՝ այն տառից Հնչակա-
 նութեան համաձայն, ցոյց կու տանք փոփա-
 քողաց Հոֆմանի և Աղաւթ Մէքսի (Gram-
 matica syriaca, Hales 1867) ընտրի գործն,
 ուր ամենայն ինչ ընդգրձակ կերպով պար-
 զուած է։

Թերեւս առարկեն ոմանք, թէ Հայոց լե-
 զուի կանոնաց հակառակ էր նոյնատեսակ
 կրկին բաղաձայններ, օրինակ իմն, գգ, ծծ,
 դդ, քք, շշ և այլն իրարու քով գրել։ Սա-
 կայն ներուի ինձ բռն, թէ այսպիսի երկ-
 րայութիւնք Հնդկացիքուն լեզուաց համե-
 մատական լեզուաբանութեան որոշ տեղեկու-
 թիւն չունենայէն յառաջ կու գան, որոնք
 ամէնն ալ ունին, սանսկրիտէն սկսեալ. Հայ-
 կազեանն ալ կարծեմ բաւական օրինակներ
 կու տայ մեզ, բայց ի մասնաւորի բառերուն
 սկիզբները. իսկ ի բառամիջի՝ ընդհանու-
 պէս երկու նրբաձայնները միջնաձայն տառի
 մի վերածուած են, ասանք ալ թաւ տառի մը։
 Հնորհեցէք ինձ վայրկեան մ'ալ՝ մեր քոյր
 լեզուին, այն է պարսկերէնէն փոխառեալ
 պատկառելի անուանց այցելենք, խնդիրն ի

Հիմանց ուսումնասիրելու, և նախորդ ճառա-
խօսի վարանմունքը լուծելու համար: Այս
մասին եւս կը գիմեմ Հիւպլմանի՝ դեռ ան-
ցիակ տարի հրատարակած ծանրակշիռ գոր-
ծին, զոր խորագրած է Armenische ety-
mologie, այսինքն է՝ Հայկական (անուանց)
ստուգարաններինը, քաղելով անտի մի քանի
յատուկ անուններ, որոնք պահլա կամ փեհ-
լիներն փոխ առնուած են, մէջ բերելով նաեւ
անոնց սկզբնաձեւերը: Պահլ. Artaxšatr և
սասան. Artasir Թարգմանուած է Արտա-
շէս, հայ. Przišarnāh = Բարդափարան, Հրա-
դէն անուան զանդ. ձեւն է ʾbraetaona,
պահլ. Frētin, հայն աննման է երկուքին ալ:
Պհլ. Mähbut, յու. Μεβδωτης = Բուամաճ. —
հայ. Dārayava(h)us = պհլ. Dārayāv =
Հ. Դարեւ. — պհլ. Damavand = Հ. Գրմ-
բաւրնդ. — զանդ. Zaxrađuštra = Հ. Զրա-
դաշտ = նպ. Zaxrađušt. — նպ. Tabrez =
Հ. Թաւրէշ. — հայ. farnah = մպ. Farru-
xān = պհլ. farraḫ = Հ. Խոռեմաճ. — պհլ.
Farraxv zātān = Հ. Խոռոխազատ. — պհլ.
Farraxv but = Հ. Խոռոհրուտ. — Զանդ.
Uxšyatgrctā = պհլ. Xoršētar = Խորա-
շէտ. — պհլ. Hinduk, Hendukān = Հ.
Հնդկիք. — Զանդ. Frazdānu = պհլ. Fra-
dān = Հ. Հրազդան. — Զանդ. Fra ā-
ta = հպ. Vatafra ata = Հ. Հրահատ.
— Զանդ. Manuščīθra = պհլ. Manuščī-
θhr = հայ. Մանաձիհր. — Զանդ. Mi-
θra = հպ. M(i)θra = պհլ. M(i)tru (որ կը
հնչուի Mihr) = հայ. Միհր. — պհլ. M(i)-
trugān = Հ. Միհրական, նպ. կը գրէ Mihr-
gaḡān. — պհլ. M(i)trd(a)(ā)n = Հ.
Միհրդատ = յու. Μιθριδάτης = լատ. Mith-
ridates. — Զանդ. Verethragna =
հպ. Vrthragna = պհլ. Varhagn, զոր
մայք փոխած են ճիշդ վարնագն. իսկ Թարգ-
մանիք՝ պահլաւերէն հնչման համաձայն՝ hr
և rh հայի փոխադրելով՝ գրեցին վանագն:
Ուրիմն այս և նախորդ անուանց զանդ. thr
նախ պհլ. th ի, և սա ալ հայ. հ տառին
վերածուած է: Եթէ համեմատական լե-
զուաբանութիւնն այսպիսի փոփոխութեանց
դեռ հարկւրաւոր օրինակներ չիտար և պար-
զից, որոնք մտքէն կ'անցնէր լոկ տառհան-
դիպութեամբ լուծել Միհր և վահագն ա-
նուանց սկզբնաձեւերն: Հպ. Jauna =
պհլ. Yaunā = հպ. Գոյն, — պրո. Nām-
dār - Gušasp = նպ. Nāmdār = Հ. Նամ-
գոարան շոնասպր Գովէն աւելի հոս տեղա-
տուութիւն կայ տառի և բառի: Այսպէս է և
հետեւեալ զանդկ. naisyōsañha = սանհ.
narāçsa = պհլ. Nrshšh Šāpuhr = Հ.
Ներ-շապուռն: Հպ. pātisxvār. զանդկ. pai-

tišxvariš-gairi = պհլ. Padašxvargar kōf
= Հ. Պատիժահար գաւառ: (Միկն. տեա
Հիւպլմանի քով, յէջ 66): — Պհլ. Rāstgo-
višn = նպ. Rāstsaxun = Հ. Ռաստսոնոն.
— պրո. Bahram = պհլ. vahramān = Հ.
Վրամ, — Զանդ. Vaitigaesa = պհլ. Vāt-
ges = Հ. Վատգէս և Վարգգէս, նպ. Bāt-
ges: —

Անշուտ դիտեց իւրաքանչիւր ոք, որ ոչ
ձայնաւոր տառերու, այլ նոյն իսկ յաճախաւ
դաձայնից տառհանդիպութիւնք խիստ ցան-
ցառ են. և հնազոյն կամ սկզբնաձեւերէն
աւելի՛ իրենց մերձաւոր պահլաւերէնին հա-
մաձայներ են նախնիք: Բ. և V = Բ,
Վ, տառերու փոխադարձ գործադրութիւնն
ալ հին պարսկերէնի և պահլաւերէն հնչա-
կանութեան՝ քան թէ Ե. դարու յունական
տառից ձայնափոխութեան արդիւնք է ուղ-
ղակի:

Տառից և ձայնից փոխադրութեան ինդիքն
այսպէս պարզնէն վերջ, այժմ պիտի ընեմ
ձեզ, Փերապայծառ Տէր, և վերապատուեալ
Հարք իմ, այս բնական և ամենաբանա-
ւոր հարցը. Կարելի՞, մանաւանդ թէ հար-
կաւոր չէ՞ արդեօք նոյն եղանակաւ և նոյն
չափով վարուիլ նաեւ այսօր հնդեւրոպական
լեզուաց նորահնչիւն ձայնից և տառից փո-
խադրութեան մէջ, ինչ չափով և եղանակաւ
որ վարուեցան մեր իմաստաստէ՛ն նախնիքն՝
իրենց դրակից և ժամանակակից տառից և
հնչմանց հետ: Միթէ մեր Թարգմանիքը՝ Յու-
նաց և Ասորաց ձայներուց կամ տառերու
համար լոկ հնարեցին հայկական հարուստ
Այբուբենը, և մենք ի՞նչ իրաւամբ պիտի
պարծինք անոնցմով, և կամ անոնք ինչո՞վ պի-
տի մատուցանեն մեզ իրենց ծառայութիւնը,
եթէ քաղաքակրթուած ազգերու մշակուած
լեզուաց փափկացեալ ձայներու հանդէպ միան-
անձայն: Ինչո՞ւ չպիտի կարեմած արտասա-
նել գերմ. փափկաձայնը Schöne = Շէօնէ,
այլ Սթոնէ, և որ ի կարգին: Մեր Թարգմա-
նիքը եթէ նոր կենա՞ց մի սկսելու ըլլային,
արդեօք այժմեան լեզուաց հնչարանական
օրինաց չպիտի՞ համակերպէին դարձեալ,
ինչպէս Ե. դարուն՝ պահլաւ և յոյն ձայնե-
րուն համակերպեցան, խոտորելով անդղիկ և
հին պարսկերէնի նիւթական տառհանդի-
պութիւններէն, զիսնալով իսկ՝ որ իրենց
նախահայրերն՝ այս վերջիններս կ'արտասա-
նէին իրենցմէ դարեւ յառաջ: Ինձ համար
ինչպէս արդի Տաճկահայոց անկանոն և հա-
կանախնի տառափոխութիւնն, այսպէս նաեւ
մեր նախնեաց անուամբ նախորդ ճառա-
խօսի պաշտպանած բացարձակ և անպայ-
ման տառահանդիպութիւնն երկու ծայրայե-

գրութիւններ են: Ուստի եթէ ճշմարիտ է այն առածն, թէ ձորաբարձիւնն ի միջին կը կա-
յանայ, ես իսկ զայդ ընտրած եմ և կը ցուցը-
նեմ ձեզ, ունելով ինձ նեցուկ և առաջնորդ
մեր երանանքնորէ նախնիբոր: Պահել անոնց
չափն և զծած սահմանը, և այնուհետեւ ա-
մենայն ինչ բարուք պիտի ընթանայ:

Արդ՝ ամփոփելով մինչեւ հիմայ բրած դի-
տողութեանց արգիւնքը, կ'առաջարկեմ հե-
տեւեալ կէտերը: Ա. Պահել նախնեաց տառ-
հանդիպութիւնը՝ բոլոր հին անուանց մէջ,
որոնք ծանօթացած են մեր պարութեան և
Ս. Գրոց Թարգմանութեանց մէջ, թէ և Գաղ-
ղիացիք և այլք մեզմէ տարբեր ուղղագրու-
թեամբ գործածելու ըլլան զանոնք իրենց ժա-
մանակակից անձանց վրայ: օրինակ իմն, չէ
պարտ բնաւ գրել Ժան, Ժաք, Փօլ, Էն, այլ
Յովհաննէս, Յատրե և Պաւլոս: Բ. Բոլոր այն
նոր անուանց մէջ, որոնք ուղղագրուած են
այնպիսի առանձնակի բաղաձայններով, որք
յուշականէն փոխառեալ մեր 22 տառերուն
քաջ կը հանդիպին, ըստ նախնեաց դասա-
ւորութեան, Գ. Սայն նոր անուանք, որոնք
կը գրուին ձայնաւոր և բաղաձայն երկտա-
ռիւ և եռատառիւ, ինչպէս օրին. աղագաւ
Aixe, Voltaire, Schiller, Chateaubriand,
Shakespeare, և այլն, որոնք մի միայն տա-
ռահնչին կը կազմեն, և քաջ կը հանդիպին
մեր ե, է, չ, ճ, ջ, չ, ց, ձ, ծ, և այլն,
առանձնակի տառերուն, պէտք է ըստ ձայնին
Թարգմանել, և ոչ ըստ նիւթական տառ-
հանդիպութեան. ապա թէ ոչ՝ մի և նոյն
ձայնը իրարմէ տեսակաւ տարբեր երեք տա-
ռերու տուած կ'ըլլանք, որ է հակառակութիւն
և հակառակ անոնց բնութեան: Ուստի՝ ըստ
իւ Tsch=չ, Dch=ջ, (Dj=D), Tz, =ց, sci,
sch, sh, ch = չ, և այլն և այլն: Դ. Անդ-
ղիարէն կամ մի այլ լեզուի մէջ պէտք չէ
բնաւ Թարգմանել այն սղելի տառական, որոնք
իրենց բնիկ լեզուին մէջ բնաւ ձայն չունին,
ինչպէս knowlege = նուէզ կամ նուէճ: Ե.
ց, Շ տառերու նշանաւոր Զամոդուած չեմ՝
որ զարդիարէն հնչման համեմատ ժի, ժը և
սի, իտայ. ճի, ճէ և յի և յի գրուին, և կամ
ըստ գերմ. ցի. որովհետեւ զգրաւ ձ և օ, ւ
և ի, այսպէս նաեւ բաղաձայն ուրիշ տառից
քով. դարձեալ յունական չ գամմայի պէս կը
հնչուին. իսկ գերմանական և պաւ լեզուաց
մէջ միշտ: Սակայն և այնպէս հակառակ չէ
նախնեաց կանոնին, եթէ գէթ զարդիարէն
և իտալերէն նոր անուանց մէջ, — յայտ է
թէ միայն օ և ի ձայնաւորաց դիմաց, — ա-
նոնց հնչման համաձայն Թարգմանել. իսկ
ուրիշ պարագայից մէջ գիմի և կնիւի:

Ահաւասիկ իմ խոնարհ տեսութիւնքս:

զորս յանձն առնելով ձեր աշխուրջ դատ-
ղութեան, և այսպէս կը կնքեմ իմ խօսքս,
թէ որ ինչ բարին է, զայն իւրաքանչիւր ոք
խորհեացի: —

Հ. Բ. Ս.

ԵՃՆԵԿ ԿՈՂՐԱՅԻՆՑ ՄԱՍԻՆ

առ Բարբէն Վ.

Հանգէս Արտեմի մէջ (1907 թիւ 9-10) գետե-
ղած էք մի քանի ուղղագրութիւններ՝ Նովկայ մա-
սիմ, քամախիւաց ուշադրութիւնը հրաւիրելով ա-
մոնց վրայ:

Անխորդ չէ՝ փոխադրածաբար՝ ջեր ուշադրու-
թիւնը հրաւիրել ամոնց աշխատութեանց վրայ:

Այլբարձի և անբաւ բնութեցածի ուղղագրու-
թիւնը քսամ տարի առաջ կատարուած է Մեծապ.
Նորայր Բուսմեղացիէմ, որում բառաքմութիւնը
միայն ծանօթ է ձեզ, և ոչ վիճաբար փնտրելու
չը գրէք:

«Ե. չոր ոչ մորա է, որ անբարձի և անբաւակ և
անհատ և առանց մասանց է» էջ 226, Գեղարք է ուղ-
ղել անբաւ, չամտ. «Իսկ Նովկայիւրեանքն ասեմ. ան-
հատ և անբարձի մարմինը էին գառաչիմն, և ամ.
տի եկաց ամենայն» (էջ 206), «որպէս մարմինը
անհատ և անբարձի էին գառաչիմն, և ամտի թամ-
նորացեալ յողեցաւ ինքն աշխարհս» (էջ 228), «որ
ի մամնէ է և միշտ առ մմա անբաւ և առանց բա-
ժանելոյ» (էջ 235), թէւս այս վերջինը տարբեր
տեղ և տարբեր առիթով ըսած է:

Քննաւել կը գրէ (էջ 11).

«Շատ ամզամ զայս հատուած կարդալով ի վա-
րանս կը մտնէի թէ ֆառակ (քառ Դաւիթ Ամաղ-
թեան) իմնչպէս սպրդած է յեզմկայ հայկաբանոյ
թիւնն, ուր ուրեմն գուշակեցի թէ պէտք է կար-
դալ «Որ ամբարձիմ անբաւ և ամհատ և առանց
մասանց է»:

Համեմատել.

«Եւ զիւրոյ զըմութեանն չորդիմ. որ ի մամնէ է
և միշտ առ մմա անբաւ և առանց բաժանելոյ»
(Եզմիկ, 235). (Այս անբարձի և անբաւ և անբաւ և
առանց բաժանելոյ» գտամ մէկզմէկ):

«Ձի ցուցցէ զմիւրարկամ անբաւ անբարձի ինք-
նութեան միութիւն»։ Ապառնեցողոս 279 (առաջին
տպագրութիւն Ս. Ղազարու, չուսմի գեղեցորդն)։

«Ի սկզբնէ էք Բան»։ զանկարեկամ ձմուղմ յայտ
առնէ. և Բանն էր առ Աստուած զամբակ միութիւնն։

Սեբեդեանու, Դ, 68:

«Քամզի գիտէ զանբարձի բնութիւնն և զանբաւ
թագաւորութիւնն»։ Գլխին, ամոլ Է, 129:

Սեբեդեանուի հրատարակելիմ գտեալիմ ի ծնու-
ղրիմ «Նախ և զանկարեկամ ծննդեանմ մեկնէ, և
այս գամմիմն ունելոյ առ Հայր ցուցանէ գամ.
քամակութիւնն» ուղղած է գեղեցկապէս զանբա-
ւութիւնն. Դ, 68»:

